

## ՆԿԱՐԱԳԻՐ

### առաջարկվող ապրանքի ամբողջական

ԱԶ Մհեր Աբրահամյան-ն ՍՉԱՄ-ԷԱՃԱՊԶԲ-24/3 ծածկագրով կազմակերպված Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում  
Ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
1	<p>Արխիվային շարժական մետաղական դարակաշարեր՝ նախատեսված արխիվներում, գրասենյակներում և գրադարաններում գործնական փաստաթղթեր և գրքեր պահելու համար: Շարժական դարակաշարերի կառուցվածքի հիմքը քանդուկի շարժական հիմնատակն է (բազան)՝ ռելսային համակարգով, հիմնակմախքով (կարկաս) և շարժաբերով: Ռելսերի վրայով դարակաշարերի տեղաշարժն իրականացվում է մեխանիկական շարժաբերով եռառանցք պլաստմասսայե ղեկով, որն ունի պտտվող բռնակներ: Ղեկի մեխանիկական շարժաբերն ունի շղթայի լարվածությունը թուլացնող ավտոմատ հավասարակշռիչ (կոմպենսատոր) և սևեռակիչ մեխանիզմ: Հիմնակմախքի մասերն են միակտոր հենակները, դարակները, խաչարդները: Ղեկի շարժաբերում օգտագործում է ռեդուկտորային սխեմա, որը նվազեցնում է ղեկի վրա կիրառվող ուժը: Բեռնված դարակաշարերը հեշտությամբ շարժվում են: Ռելսը այլումինե համահավաճքից է: Անիվը՝ կենտրոնական շրջակողով, նյութը՝ այլումինե համահավաճք: Կեղծ հատակը՝ լամինացված փայտատաշեղային (ЛДСП) սալիկից, 22 մմ հաստությամբ: Ռելսերի վրա տեղադրվելուց հետո կեղծ հատակը չի դիպչում հատակի ծածկույթին: Առաքումը և տեղադրումը իրականացվում է մատակարարի հաշվին՝ ըստ պատվիրատուի ներկայացրած վայրի, գունային համադրումները համաձայնեցվում են պատվիրատուի հետ: Քանակը՝ 6-7 հատ ամբողջական դարակաշար, որոնցից յուրաքանչյուրն ունի հետևյալ չափերը. - Երկարությունը՝ 400 սմ, բաղկացած 100 սմ-ոց առանձին 4 դարակաշարից (стеллажи) - Լայնությունը (խորությունը)՝ 2*30 սմ - Ընդհանուր բարձրությունը՝ 270 սմ բաղկացած 6-7 հարկ դարակներից (полки) - Դարակի բարձրությունը՝ 38 սմ, 50 կգ բեռնունակությամբ Շարժական դարակաշարի կարկասի</p>

կառուցվածքը՝ երկկողմանի՝ 60 սմ լայնությունը երկու մասի բաժանած, մեջտեղում պատնեշով (դարակաշարերի քանակ 6-7 հատ, որից 1 հատը անշարժ, մյուսները շարժական): Առաջին և վերջին դարակաշարերը ունեն 4 կոմպլեկտ 2 ական դռների փեղկեր: Շարժման մեխանիզմը՝ ձեռքով, դեկի միջոցով: Շարժաբերը՝ շղթայական, ռեդուկտորով, յուրաքանչյուր առանձին դարակաշարը տեղաշարժելու հնարավորությամբ: Դարակաշարերը բաց վիճակում միջանցքի լայնությունը 750 մմ: Ռելսերի երկարությունը 580 սմ: Չուգահեռ ռելսերի քանակը-3 հատ: Երաշխիքային ժամկետ՝ 2տարի: Նշված չափերը կարող են ենթարկվել փոփոխության, պահանջվում է վերջնական չափագրում:





## ПОЛНОЕ ОПИСАНИЕ

### предлагаемого товара

ИП Мгер Абраамян в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом U2QU-ECXU72F-24/3 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
1	